ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԻ ՀԱՐՑԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայոց գրերի գյուտի պատմության բուն ժամանակի երեք սկզբնաղբյուրներն են Կորյունի «Վարք Մաշտոցի» գործը և Մովսես Խորենացու ու Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն»-ները, և հատկապես Կորյունի և Խորենացու երկերը, քանի որ Կորյունը և Խորենացին անմիջաբար եղել են Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտները:

Գրերի գյուտի այս առաջին երկու սկզբնաղբյուրներում ասվում է, որ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը, ձեռնամուխ լինելով գրերի ստեղծմանը, այս հարցով նախ դիմում են Հայոց Վռամշապուհ թագավորին, և վերջինս ասում է, որ ինքը լսել է, թե Դանիել Ասորի անունով եպիսկոպոսի մոտ կան հայերեն լեզվի համար ստեղծված գրեր: Իմանալով այդ մասին, Ս. Սահակը և Ս. Մեսրոպը բերել են տալիս այդ գրերը և նրանցով սկսում ուսուցանել մանուկներին, սակայն շուտով պարզվում է, որ այդ գրերը բավական չեն հայոց լեզվի հնչյունները արտահայտելու համար, ուստի և Ս. Մեսրոպը վերստին սկսում է զբաղվել Հայոց Այբուբենի ստեղծման աշխատանքներով, և առժամանակ անց պահքով և ճգնությամբ անցկացվող առանձնության մեջ Աստվածային ամենաշնորհ Աջով տեսիլում նրան տրվում են Հայոց գրերը:

Անկախ նրանից, թե ինչ են եղել Դանիելյան անվանված գրերը և որքանով են նրանք ներառվել ու օգտագործվել նորաստեղծ Մաշտոցյան Այբուբենում, հինգերորդ դարի մեր պատմագիրները որևէ ակնարկ իսկ չունեն այն մասին, թե Մաշտոցը բոլոր գրերը չէ, որ ստեղծել է և կամ էլ թե ստեղծել է այս գրերը, և կամ էլ որևէ նշում ունեն, թե այսքան թվով գրեր ստեղծվեցին: Հաջորդող շրջանում, սակայն, մի շարք երկերում՝ թե՛ պատմագիտական և թե՛ այլ բնույթի, ասվում է, որ Մաշտոցը ստեղծել է միայն ձայնավորները: Անդրադառնալով այս վկայություններին, Մանուկ Աբեղյանը գրում է. «Դրանք բոլորը շատ ուշ դարերի լոկ ենթադրություններ են և ծագել են, բնականաբար, իբրև պատասխան այս հարցին - եթե Դանիելյան նշանագրերը բավական չեն եղել հայերենի համար, արդյոք քանի տառ են պակաս եղել, ուրեմն և Մաշտոցը քանի տառ պետք է հորիներ, հետևաբար և հորինել է: Բոլորը «գիտական» կոմբինացիաներ են, որոնք մեզ համար այժմ արժեք չունեն: Գրերի գյուտի պատմության հիմքը հնագույն գրող Կորյունի գիրքն է, որին հետևում են մեր հետագա գրողները մեծ մասամբ»[1]:

Նույն ձևով նաև Հրաչյա Աճառյանն է գրում. «Սկզբում Մեսրոպի ավելացրած տառերի թիվը 7 է համարվում, բայց առանց որոշելու, թե ինչ տառեր են: Երկու-երեք դար հետո՝

[1] **Մ. Աբեղյան**, Մեսրոպ Մաշտոց, «Մեսրոպ Մաշտոց», Հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 260:

թիվը բարձրանում է 14-ի (ինչպես ունեն Սասունցին և Վարդանը), սրանք էլ դեռ չեն որոշում տառերի էությունը: Քիչ հետո գալիս են Գանձարանն ու Ոսկեփորիկը, որոնք խաբվելով 7 թվի գաղափարաց զուգորդությամբ, ենթադրում են, թե Մեսրոպի հնարած գրերը ձայնավորներն են»[2]:

Այս հիշատակությունները սակայն, անկախ իրենց պատմական արժեքից, արտահայտությունն են տևական մի ժամանակաշրջանի ըմբռնումների, որոնց վերհանումը կարևորվում է այդ շրջանի հոգևոր-մշակութային ու բնագիտական մի շարք հասկացությունների ընկալման տեսանկյունից, ուստի մեր այս հոդվածում նախ բերելով գրերի գյուտի Ոսկեդարյան շրջանի պատմիչների վկայությունները, այնուհետև հերթով կներկայացնենք այն հեղինակների հիշատակությունները, որոնցում ասվում է, իբրև թե Մաշտոցը Հայոց Այբուբենի տառերի մի մասն է ստեղծել, և կփորձենք ներկայացնել Աճառյանի բնորոշմամբ «7 թվի գաղափարաց զուգորդությամբ» ներկայացված այն ըմբռնումները, որոնք պատճառ են հանդիսացել գրերի գյուտի և Դանիելյան նշանագրերի պատմության նման վերամեկնաբանման համար:

Մեր աշխատանքի ընթացքում ելակետ ենք ընդունել այն դրույթը, որ Մաշտոցի կողմից ձայնավորների կամ յոթ գրերի ստեղծման պատմությունը հիմնված է ոչ թե պատմական որևէ սկզբնաղբյուրի վրա, այլ պայմանավորված է յոթ թվի այլաբանական այն իմաստներով, որոնք այս թվին տրվել են տակավին վաղնջական շրջանից, այնուհետև համակարգված ներկայացվել թվերի Պյութագորական ուսմունքի շրջանակում, ապա փոխանցվել Պլատոնականությանը և Նորպլատոնականությանը ու հոգևոր մի նոր իմաստավորման ենթարկվել քրիստոնեական խորհրդաբանության մեջ:

Անհրաժեշտ է հատկապես շեշտել, որ յոթ թվին ընծայվող տարբեր իմաստների զարգացման ընթացքը ուղիղ համեմատական է Մաշտոցի կողմից յոթ ձայնավորների ստեղծման ըմբռնման ձևավորմանը և իր հայելային արտացոլումն է գտել փիլիսոփայական, աստվածաբանական ու լեզվաբանական տարբեր երկերի՝ ձայնավորներին ու յոթ թվին վերաբերվող հատվածներում, ինչպես նաև բնագիտական բնույթի մի շարք երկերում և մեկնություններում: Երբ իրար ենք զուգորդում ձայնավորների՝ որպես հոգու, և բաղաձայնների՝ որպես մարմնի, ըստ այդմ, ձայնավորների աստվածային բնույթի մասին ըմբռնումը և յոթի, որպես աստվածային թվի ընկալումը և միջնադարյան մտածողության բազմաստիճան վերացարկմամբ ձայնավորների և յոթի հոգևոր խորհուրդը հարաբերում մաշտոցյան գրերի, որպես Աստվածատուր գրերի համոզման հետ, նոր է պարզ լինում, թե միջնադարյան բոլոր այն հեղինակները, ովքեր հատուկ շեշտում են Հայոց գրերի աստվածատուր լինելը, ինչու են գրում, թե Մաշտոցը ստեղծեց միայն յոթ ձայնավորները և դրանցով հոգի՝ կենդանություն պարգևեց Դանիելյան նյութական մեռյալ գրերին՝ բաղաձայններին:

Ասվածը հավաստելու համար, նախ ըստ ժամանակագրական ընթացքի ներկայացնենք մատենագրական հիշատակությունները, ապա ձայնավորների ու թվերի և մասնավորապես յոթ թվի մասին եղած ըմբռնումները և այդ ըմբռնումները հարաբերելով հիշյալ մատենագրական վկայությունների հետ, փորձենք ցույց տալ, որ այդ վկայությունների հիմ-

---

[2] Հր. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 490:

քում ընկած են ոչ թե որոշակի պատմական փաստեր, այլ որ դրանք հետագա շրջանի նորովի վերամեկնաբանումն են Դանիելյան գրերի մասին հինգերորդ դարի հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների:

Կորյունը Դանիելյան գրերի համար գրում է, որ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը «իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ»[3]:

Այսինքն, տեսնելով, որ Դանիելյան գրերը բավական չեն հայոց լեզվի համար, վերստին սկսում են զբաղվել Հայոց Այբուբենի ստեղծման հարցով: Գրերի գյուտի մասին էլ Կորյունը գրում է. «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ Սուրբ Աջովն Իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք»[4]:

Դժվար ընկալելի այս հատվածի հատկապես խրթին վերջին նախադասությունը միանգամայն հստակորեն այսպես է բացատրում Աբեղյանը. «Նշանակեց»-գրեց, գծագրեց: «Անվանեց»-գրեց բառերի անունները, որ են՝ Այբ, Բեն, Գիմ, Դա և այլն: «Դասավորեց» (բնագիրը՝ կարգեաց), այսինքն՝ տառերի կարգը, շարքը որոշեց: Այդ դասավորությունը հունարենի ալփաբետի համեմատ է, միայն շարքի մեջ տեղ-տեղ ավելացրած են տառերը, որոնց համապատասխանը չկա հունարենում»[5]:

Այսպիսով, Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը որևէ հիմք չի տալիս Մաշտոցի կողմից Հայոց Այբուբենի ընդամենը մի քանի գրերի ստեղծած լինելու մասին: Նույնը վերաբերվում է նաև Խորենացու Պատմությանը:

Խորենացին Դանիելյան նշանագրերի մասին գրում է. «...կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվաղնջուցն գրեալ շարագիր տառից՝ եկեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց ուսեալ, և թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեգեմնայ բառից հայկականաց հագներգաբար, մուրացածոյիւն այնուիկ գծագրութեամբ»[6]:

Ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը Կորյունի գործի ձեռագրագիտական քննությամբ ցույց է տվել, որ այն հատվածը, ուր խոսվում է Ս. Սահակի և Ս. Մեսրոպի՝ Դանիելյան նշանագրերով աշակերտների հետ երկու տարի պարապելու մասին, ձեռագրային տեղաշարժի արդյունք է և «երկու տարի» կապակցությունը ոչ թե Դանիելյան գրերով երկու տարի պարապելուն է վերաբերվում, այլ գրերի գյուտից հետո աշակերտների հետ Վաղարշապա-

---

[3] **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 94:

[4] Նույն տեղում, էջ 96:

[5] Նույն տեղում, էջ 311:

[6] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, գիրք Գ, գլ. ԾԲ, էջ 326:

տում պարապելուն[7]:

Այստեղ, սակայն, առաջ է գալիս այն հարցը, թե ինչպես է, որ Խորենացին գրում է, թե Ս. Սահակը և Ս. Մեսրոպը Դանիելյան նշանագրերով պարապեցին «ամս սակաւ», որը համահունչ է Կորյունի «ամս երկուս» արտահայտությանը:

Ա. Մաթևոսյանը ենթադրում է, որ Կորյունի երկի ինքնագիր օրինակում ձեռագրի տեղաշարժը տեղի է ունեցել մինչև Խորենացու Պատմության գրվելը, որով Պատմահայրը փաստորեն ծանոթ է եղել արդեն «տեղաշարժված» վարքին:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Խորենացու մոտ Դանիելյան նշանագրերի օգտագործման համար ասվող «ամս սակաւ»-ը միանգամայն այլ ձևով է ներկայացված Խորենացու հնագույն մագաղաթյա պատառիկում: Երևանի Մատենադարանի պատառիկների հավաքածուի հմր. 1411 պատառիկը, որը թվագրվում է Ժ-ԺԱ դարերով և համապատասխանում է Խորենացու «Հայոց Պատմության» ԾԱ, ԾԲ և ԾԷ գլուխներին, էական երկու տարբերություն ունի Խորենացու՝ մեզ հասած այժմյան բնագրից.

Պատառիկ հմր. 1411	Խորենացու գիտական բնագիր
Սահակ և ցՄեսրոբ,՝ որոց *առեալ* եւ թեւաածելով ընդ նոսա. եւ տղայս *զոմանս* սակաւս...[8]:	Սահակ և Մեսրոպ, որոց *ուսեալ*, և թևածելով ընդ նոսա տղայոց *զամս* սակաւս...

Այստեղ ընդգծված բառերը մատնանշում են երկու էական տարբերություն: Առաջին, որ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը ոչ թե Դանիելյան նշանագրերը «ուսեալ»՝ ուսանելով են թևածել, որն անհեթեթ է, քանի որ դրանք չէին համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին, այլ առնելով էին թևածում, քանի որ դեռ չգիտեին Դանիելյան գրերի անգործածելի լինելու մասին: Եվ երկրորդ, որ հնագույն այս պատառիկում «զամս սակաւս»-ի փոխարեն գրված է «զոմանս սակաւս», որը դարձյալ առավել համահունչ է այս հատվածի իմաստին: Եթե մեզ հասած բնագրում ասվում է, որ Դանիելյան նշանագրերով տղաներին սովորեցրեցին սակավ տարիներ, ապա ըստ պատառիկի պետք է հասկանալ այսպես՝ քիչ թվով որոշ տղաների:

Ինչպես նշում է Ս. Քոլանջյանը, Կորյունի հիշյալ տեղաշարժված հատվածը առիթ է դարձել, որ նրան հարմարեցվի նաև Խորենացու համապատասխան հատվածը, որով «զոմանս սակաւս»-ը դարձել է «զամս սակաւս», այնինչ Պատմահոր սկզբնագիր բնագրում որևէ խոսք չկա Դանիելյան նշանագրերով երկու տարի դասավանդելու մասին[9]: Համանման ձևով չի կարելի խոսել նաև Դանիելյան նշանագրերի՝ Մաշտոցյան Այբուբենի վրա թողած ազդեցության մասին:

Բուն գրերի գյուտի մասին էլ Խորենացին գրում է. «Եւ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին

---

[7] Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 160-172:

[8] Ս. Քոլանջյան, Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատառիկն ու Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», հմր. 4, Երևան, 1958, էջ 172:

[9] Նույն տեղում, էջ 182:

աջոյ՝ գրելով ի վերայ վիմի, զի որպէս ի ձեռն վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յամառ ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հոռփանոսի կերպաձևեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթուրայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելլենացւոց»[10]:

Այստեղ ևս որևէ տարբերակում չկա ձայնավորների ու բաղաձայնների միջև և որևէ հիշատակություն՝ ստեղծված գրերի թվի մասին: Նույնը վերաբերվում է և Փարպեցու «Հայոց Պատմությանը»:

Ճիշտ է, Փարպեցու գրածը թեև որոշակիորեն տարբերվում է Խորենացու գրածից, սակայն, այնուամենայնիվ, հիմք չի տալիս հաջորդող դարերում ստեղծված այն հիշատակությունների համար, որ Մաշտոցը միայն մի քանի տառերն է ստեղծել:

Հետազոտողները նշում են, որ Փարպեցին իր Պատմությունում ցանկացել է բարձրացնել Ս. Սահակի դերը, ինչպես նաև նրա շարադրանքի՝ գրերի գյուտին վերաբերվող հատվածը կա՛մ եղծված է, կա՛մ էլ կրճատված[11]: Նման կարծիքի համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Փարպեցու շարադրանքից այն տպավորությունն է ստեղծվում, թե Մաշտոցը Հայոց Այբուբենը ստեղծելու փոխարեն դիմել է Ս. Սահակին, և վերջինս Միջագետքից բերել է տվել Դանիելյան նշանագրերը, որից հետո «արքայն Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ և երանելեաւն Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէ՝ ուրախ լինէին»[12]:

Դանիելյան նշանագրերը ձեռք բերելու ուրախության մասին գրելուց հետո Կորյունը և Խորենացին անմիջապես նշում են, թե ինչ հիասթափություն է պատում Ս. Սահակին և Ս. Մեսրոպին, երբ նրանք պարզում են, որ այդ գրերը կիրառելի չեն հայոց լեզվի համար: Կորյունը և Խորենացին այնուհետև գրում են գրերի գյուտի մասին և նոր ներկայացնում ծավալված այն հոգևոր-գրական աշխատանքը, որը հայտնի է Թարգմանչաց շարժում անվանմամբ:

Այնինչ Փարպեցին գրելով, թե Վռամշապուհ արքան, Ս. Սահակը և Ս. Մեսրոպը այսպես ուրախանալով բերված նշանագրերի համար, հաջորդ նախադասությամբ արդեն ասում է. «Եւ այսպէս դիպեալ գիւտի նշանագրացն՝ ձեռ ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յերիւրելով զնա Սուրբ Հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեզենային ուղղաձայնութեան»[13]:

Փարպեցու մոտ այս անցումը, առանց որևէ հիշատակության Դանիելյան գրերի թերի լինելու մասին, ցույց է տալիս, որ այստեղ շարադրանքը աղճատված է: Այս հանգամանքի գիտակցմամբ է, որ Փարպեցու Պատմության ձեռագրերից մեկում Դանիելյան նշանագրե-

---

[10] **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմութիւն, էջ 327:

[11] Փարպեցու՝ գրերի գյուտի պատմության և այդ մասին հայտնված կարծիքների մասին տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Ղազար Փարպեցին Մաշտոցյան գրերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2002, հմր. 2, էջ 93-110:

[12] **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Տփղիս, 1913, էջ 15:

[13] Նույն տեղում, էջ 15:

որը բերելու և նրանցով գործունեություն ծավալելու՝ վերը հիշված նախադասությունների միջև բերված է Խորենացու «Հայոց Պատմության» (Գիրք Գ, գլխ. ԾԲ և ԾԳ) այն մասը, ուր նշվում է Դանիելյան նշանագրերի թերի լինելու և գրերի գյուտի մասին: Ճիշտ է, Գալուստ Տեր-Մկրտչյանը ցույց է տվել, որ Փարպեցու «Հայոց Պատմության» այդ ձեռագրում հիշյալ հատվածը վերցված է համարվում Խորենացու «Հայոց Պատմության» Ամստերդամի հրատարակությունից[14], սակայն նման հավելումը գալիս է վկայելու, որ հստակորեն գիտակցվել է Փարպեցու Պատմության այդ մասի թերի կամ աղճատված լինելը:

Փարպեցու պատմությունից հետո ավելի քան 1,5 դար որևէ հիշատակություն չունենք գրերի գյուտի պատմության մասին և հաջորդ վկայությունը գտնում ենք մի ժամանակագրության մեջ, որը սկսվում է Մովսես Խորենացու և Անդրեասի անունների հիշատակությամբ և հասնում մինչև 686 թվականը: Այս ժամանակագրության հեղինակի մասին տարբեր կարծիքներ են հայտնվել, ենթադրվել է, որ այն գրել է Անանիա Ծիրակացին, սակայն, ինչպես ցույց է տալիս Հ. Բարթիկյանը, այս ժամանակագրության հեղինակն է Անանիա Ծիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին[15], որը գրում է, թե Ս. Սահակի օրոք «դպրութիւն հայերէն լեզուի Իթ գրով ի Դանիեղէ փիլիսոփայէ Ասորւոյ կարգեցաւ, զոր ետ բերել Վռամշապուհ թագաւոր Վահրճայ նախարարի ձեռամբ՝ Հաբելի երիցու, իսկ զէ գրոյն պակասութիւն Մեսրովբ երանելի Հացեկաց Տարաւնոյ, յազատ տանէ, ամսաւրեայ պահաւք և աղաւթիւք հանդերձ աշակերտաւքն հայցեալ յԱստուծոյ, եւ ցուցաւ նմա ի տեսլեան»[16]:

Ահա այսպիսով, 7-րդ դարի վերջին ստեղծված այս ժամանակագրությունում հստակորեն տարանջատվում են Դանիելյան նշանագրերը Մաշտոցի ստեղծած գրերից: Ս. Սահակին վերապահվում է Դանիելյան նշանագրերը բերելը և դրանք կիրառության մեջ դնելը, իսկ Մաշտոցին՝ յոթ ձայնավորները ստեղծելը:

XI դարի կեսից այս ըմբռնումը այնուհետև իր արտացոլումն է գտնում մեր մի շարք մատենագիրների գործերում: Այսպես, Ստեփանոս Տարոնացին (Ասողիկը) գրում է, որ Ս. Սահակի օրոք «դպրութիւն հայոց լեզուիս Իթ գիր ի Դանիեղէ փիլիսոփայէ Ասորւոց կարգեցաւ, իսկ զԵօթն գրոցն պակասութիւն Մեսրովբ երանելի Տարօնեցի խնդրուածովք յԱստուծոյ առնու»[17]:

XIII դարի պատմիչ Վարդան Արևելցին արդեն գրում է, թե Ս. Մեսրոպը 14 գիր է ստեղծել, և այն էլ Բալուում. «Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն, քսան եւ երկու գիր առ Դանիելի Ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զԱստուածաշունչ մատեանս ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ Սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա որպէս մեծին Մովսէս ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուա-

---

[14] Նույն տեղում, էջ 15:

[15] Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Ե, գիրք Ա, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 699-900:

[16] Նույն տեղում, էջ 951:

[17] Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 139-140:

ծագիծ վիմին և նկարք գրելոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիւք միշտ ի տաճկաց և քրիստոնէից բնակչաց տեղւոյն»[18]:

Ամենայն հավանականությամբ, նույն այս շրջանում ստեղծված «Ցաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի» ներբողյանում ասվում է. «Ցայսմ ժամանակիս եղև խնդիր պակասութեան գրոյն հայոց, զոր ունէին Իթ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորոյ աշակերտ Սրբոյն Գրիգորի: Իսկ Սուրբն Սահակ և Մեսրովպ բազում աշխատութեամբ պէտս արարին, սովոյ և ծարաւոյ յոտանաւոր չարչարանաց ի լերինս տքնեալ զԽ տիւ և զԽ գիշեր, ոչինչ ճաշակելով, բայց միայն յաղօթսն Աստուծոյ պարապեալ: Եւ լուաւ Տէր աղօթից նոցա՝ ըստ գրեցելոցն, թէ զկամս երկիւղածաց Իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ: Եւ ի տեսլեան գիշերոյն հրեշտակ Տեառն էջ յերկնից առ նոսա և որպէս ի տըլընջեան խօսեր ընդ նոսա, և յաման ինչ խեցեղէն՝ մատամբ նկարեալ տայր նոցա զգիրս է: Եւ զարթուցեալք ի քնոյն և զնոյն նշանակ ունելով և զոհանային զԱստուծոյ, զտուողէն այնպիսի պարգևացն»[19]:

Ինչպես երևում է վերը բերված հատվածից, այստեղ արդեն խոսվում է ոչ թե գրերի գյուտի, այլ գրերի պակասությունը աստվածատուր յոթ գրերով լրացնելու մասին: Մովսես մարգարեին տրված Տասնաբանյայի հետևողությամբ այնուհետև ասվում է. «Որպէս առ Մովսէսիւ տուեալ տախտակս Ժ պատգամացն, պատուիրան տանն Իսրայէլի և աշխարհս Հայոց գրեալ մատամբն Աստուծոյ առ նոր Իսրայէլս, որդիս Սրբոյն Գրիգորի»[20]:

Թե՛ հիշյալ ներբողյանում և թե՛ Վարդան Արևելցու Պատմությունում գրերի գյուտը ներկայացվում է Խորենացու և Կորյունի հետևողությամբ՝ Խորենացու նկարագրության Աստվածային Աջին հավելելով Կորյունի՝ Մովսես մարգարեի հետ տարված զուգահեռը: Վարդան Արևելցին ևս, սակայն, բուն գրերի ստեղծման հարցում դարձյալ հետևում է Դանիելյան և Մաշտոցյան գրերի տարբերակման ձևավորված ըմբռնմանը, Կորյունի և Խորենացու հետևողությամբ ասելով, թե Դանիելյան գրերով հնարավոր չեղավ արտահայտելու հայոց լեզվի հնչյունական ողջ համակարգը՝ «Վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս»: Սակայն ի տարբերություն Կորյունի և Խորենացու, Արևելցին ոչ թե գրում է, որ Մաշտոցը ձեռնամուխ եղավ Հայոց Այբուբենի ստեղծմանը, այլ որ նրան աստվածային տեսիլով տրվեցին պակասող մնացյալ գրերը:

Վարդան Արևելցուն ժամանակակից Կարապետ Սասնեցին ևս իր նշանավոր «Ցաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբայ թարգմանչի և Լուսաւորչի» ներբողյանում դարձյալ գրում է, որ Մաշտոցը ստեղծել է տասնչորս տառերը, որոնք ևս տեսիլով են տրվել: Ինչպես Սասնեցին է գրում, «Եւ ի կատարման ութներեկացն ի պահու կալով, այրաձև տեսանէր զհրեշտակն որպէս Ամբակումն և հսկողն. մանաւանդ, թէ գերագոյն ևս՝ Դանիլապէս և մովսիսաբար, զՏէրն հրեշտակաց՝ մարգարէական աչաւք՝ որ գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»[21]:

---

18 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 50:

19 **Գարեգին վ. Սրուանձտեանց**, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 41-42:

20 Նույն տեղում, էջ 42:

21 Կարապետի եպիսկոպոսի Սասնեցւոյ Ներբողեան յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբայ թարգմանչի և Լուսաւորչի, Վաղարշապատ, 1897, էջ 43-44:

Վարդան Արևելցին իր մեկ այլ գործում՝ «Ժղլանք»-ում՝ «Լուծմունք ի Սուրբ Գրոց» արդեն գրում է, թե Դանիելյան նշանագրերը 17 էին ու ևս 19 գիր ստեղծեց Մաշտոցը. «Ասորիք ընդ մեր թագաւորաւքն էին, և նոցայն քսան և երկու գիր է: Ի նոցանէ ջանացան առնել մեզ գիր: Եւ լեալ էր հայերէն նշանագիր ի հին ժամանակսն սակաւ և զի չկարէին բանել նոքաւք, թողին և մոռացաւ: Եւ երբ դարձեալ ի խնդիր ելին, գտաւ առ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոսի: Եւ Սահակ և Մեսրոբ առաքեցին զԱբել անուն երեց ասորի և եբեր: Եւ զի չբերէր լիով զհարստութիւն լեզուիս, գնաց դարձեալ Մեսրոբ առ նոյն եպիսկոպոսն Դանիէլ: Եւ սակաւ ինչ աշխատ եղեն, և չկարացին ինչ աւելի շահիլ, զի առաջինն ի նոցանէ էր առած եաթուտասան գիր, զի զհինգ գիրն թողեալ էր և չէր թարգմանեալ: Երբ ջանային, թէ թարգմանենք, ըստ մեր լեզուիս, չգայր ի բան այն հինգ գիրն: Ապա յաղաւթս ապաւինեալ, տեսանէր մարգարէական աչաւք թաթ ձեռին աջոյ, որ գրէր ի վերայ վիմի. և ամենայն հանգամանքն և որպիսութիւնքն տպաւորեցաւ ի սիրտն, և վաղվաղակի ստեղծանէր իններուտասան գիր»[22]:

Այս մեկնաբանմամբ Դանիելյան գրերի քսաներկուսը լինելը բացատրվում է այն հանգամանքով, որ քսաներկու տառ ուներ և սեմական (ասորական) այբուբենը, որից իբրև թե հինգ տառերը անկիրառելի են լինում հայերենի համար, որով մնում է տասնյոթը, և Մաշտոցը ստեղծում է՝ Աստվածային տեսիլով տրվում է 19 տառ: Այս տասնիններն սակայն, միայն ժղլանքում է, և ուրիշ որևէ տեղ չի հիշատակվում:

ԺԳ դարի մեկ այլ հեղինակ՝ Հովհաննես Ավագերեցը, իր Ժամանակագրությունում գրում է. «Մասրոբ Է գիր յաւելեաց և շինեցաւ դպրութիւնն»[23]:

Նույնն է ասվում և մեկ այլ Ժամանակագրությունում, գրված ԺԷ դարում, որի հեղինակն է Դավիթ Բաղիշեցին. «...Մեսրովպ սքանչելի այրն Աստուծոյ եգիտ զձայնաւոր գիրսն, տուելովն Աստուծոյ ի վիմին տպաւորեալ ի Բալու»[24]:

Այս ըմբռնումը իր բանաստեղծական արտահայտությունն է գտել նաև ԺԳ-ԺԵ դարերի մի շարք գանձերում: ԺԳ դարի նշանավոր մատենագիր, գանձասաց Մխիթար Այրիվանեցին «Սրբոց թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ» գանձում գրում է.

Աստ Հոգին ծագեալ, առ երկուսն [Ս. Սահակին և Ս. Մեսրոպին] ազդեալ, հայ
գիր յաւրինեալ,
Վոամշապուհ աւգնեալ, Վահրիճ գործակցեալ, Դանիէլ շնորհեալ,
Քսան և ինըն գտեալ, նախնեացն արարեալ, ամս երկու չհեգեալ,
Բազում աշխատեալ, և ոչինչ աւգտեալ, ձեռն յԱստուած ձգեալ:
Ի Բալու տքնեալ, Մեսրոբ արտասուեալ, աստ հրեշտակ իջեալ,
Մատամբ փորագրեալ, յարձանի դրոշմեալ, եթն գիր յայտնեալ[25]:

---

[22] **Իսահակ Հարությունյանց**, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 268-269, տե՛ս նաև «Բազմավէպ», Վենետիկ, 1887, էջ 197:

[23] Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հտ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 14:

[24] Նույն տեղում, էջ 326:

[25] **Մխիթար Այրիվանեցի**, Գանձեր և տաղեր, աշխատասիրությամբ Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 113-114:

ԺԵ դարի հեղինակ Առաքել Բաղիշեցին «Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրաւպայ» գանձում գրում է.

Զոր ի նմանէ [Ս. Մեսրոպից] Սուրբ Սահակ խնդրեաց,
Գիր յաւրինել մեզ Հայոց Մեծաց:
Յոլով տեղիս վասն այն, որ զընաց,
Ոչ գըտանէր հընար յայնմ իրաց:
Քսան և ինն գիր էր գըրած,
Այլ անաւգուտ էր ընթերցողաց:
...Աչն Աստուծոյ անեղին փառաց
Ըզեւթըն գիրն ի քարին գըրեաց[26]:

Գանձի շարունակությունում, որին դեռ կանդրադառնանք, թվարկվում են այդ յոթ գրերը, որոնք ձայնավորներն են:

Ինչպես տեսանք, այն սկզբնաղբյուրներում, որոնցում Դանիելյան նշանագրերը հիշվում են որպես 22 կամ 29, իսկ Մաշտոցի ստեղծած ձայնավորներն էլ յոթը, նաև ասվում է, թե Ս. Մեսրոպին Հայոց գրերը Բալուում են տրվել: Բալուի նշանավոր այն քարայրը, ուր ուրարտական բևեռագրերի մեջ ցույց է տրվում «գրման քարը», որի վրա ըստ ավանդության գրվել են Հայոց գրերը, զարմանալիորեն կազմված է հենց 29 տողից, որն էլ իր հերթին բաժանվում է երկու մասի՝ 22 տող առանձին վերևում և յոթ տող՝ ներքևում:

Նկարագրելով Ս. Մեսրոպի անվանվող քարայրը, Գարեգին Սրվանձտյանցը գրում է. «...հոն եզերքին վրայ քարին երեսը տաշուած, վրան բեւեռագիր անեղծ, մաքուր, 22 տող վերը և 7 տող վարը քանդակուած»[27]:

Ինչպես արդեն ասացինք, միջնադարյան քերականագիտական ու բնագիտական աշխատություններում յոթի և ձայնավորների մասին եղած բացատրություններն են օգնում հասկանալու, թե ինչու վերը հիշած գործերում ասվում է, որ Մաշտոցը ստեղծել է յոթ կամ տասնչորս տառ (վերջինս երկու յոթերի գումարն է, որով յոթ ձայնավորների կողքին ավելանում են նաև յոթ բաղաձայններ), և այս յոթ գրերն էլ ձայնավորներն են:

Այժմ տեսնենք, թե ձայնավորներն ինչպես են ներկայացվում անտիկ ավանդների վրա հիմնված վաղ շրջանի հայ քերականագիտական աշխատություններում, և այդ ըմբռնումները ինչ հոգևոր վերաիմաստավորման են ենթարկվում ԺԳ-ԺԴ դարերում գրված քերականական նմանաբնույթ մեկնություններում:

Ինչպես հայտնի է, միջնադարյան հայկական քերականագիտական աշխատությունների հիմքում ընկած է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի» նշանավոր աշխատությունը, որի թե՛ հայերեն թարգմանությունը և թե՛ հատկապես այս թարգմանության մեկնությունները տեղայնացվել են՝ համապատասխանեցվելով հայոց լեզվի ձևաբանական և հնչյունական համակարգին:

Անհրաժեշտ է նշել, որ Թրակացու Քերականության հայկական մեկնություններում

---

[26] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 424, 183ա:

[27] Գ. Վ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1884, էջ 159-160:

հնչյունաբանական համակարգի հնչ-արտաբերական և իմաստա-տարբերակիչ հատկանիշները ներկայացնելուն զուգընթաց մեկնությունից մեկնություն այդ հատկանիշների առանձնահատկություններին հոգևոր-այլաբանական որոշակի խորհուրդ է հաղորդվել, որով բնագիտական մի շարք հասկացությունների և գիտակարգերի նման հնչյունաբանությունն էլ ինչ-որ տեղ ներառվել է միջնադարյան հոգևոր խորհրդաբանության մեջ: Զարգացման այդ ընթացքը, որով են մեծապես պայմանավորված նաև այն հիշատակությունները, թե Մաշտոցը յոթ ձայնավորներն է ստեղծել, այժմ ներկայացնենք Թրակացու աշխատությունից մինչև Առաքել Սյունեցու «Ցաղագս քերականութեան» գործը:

Թրակացու քերականության վեցերորդ՝ «Ցաղագս տառի» բաժինը նվիրված է տառերին և հնչյունային համակարգին: Թրակացու քերականության հայ թարգմանիչը հնչյունային համակարգը և այբուբենը ներկայացրել է ոչ թե ըստ հունարենի, այլ հայերենի՝ այս բաժնի սկզբում գրելով, թե գրերը երեսունվեցն են՝ Այբից մինչև Քե[28]:

Այս թարգմանությունում նաև բառերի ստուգաբանություններն են ներկայացված ըստ հայերենի պարունակած իմաստների: Այսպես, տառը բացատրվում է որպես տարր, այսինքն, ինչպես որ աշխարհը կազմված է չորս տարրերից, այնպես էլ գիրը և խոսքը կազմվում են տառ-տարրերի միակցությունից: Ինչպես նշում է Թրակացին, հունարենն ունի ութ ձայնավոր: Այս հնչյունները ձայնավոր են կոչվում «զի ձայն յինքեանց անպակաս ելուզանեն», այսինքն՝ նրանց արտաբերության ժամանակ ձայնը հնչում է առանց ընդհատվելու:

Թրակացու գործի առաջին երեք մեկնիչների՝ Դավիթ փիլիսոփայի, Անանունի և Մովսես Քերթողի ժամանակը թեև հայտնի չէ, սակայն, ինչպես նշում է Ն. Ադոնցը, նրանց գործերը գրվել են մինչև Ստեփանոս Սյունեցու մեկնությունը[29], որով, անկախ նրանից, Դավիթ փիլիսոփան Դավիթ Անհաղթն է, թե ոչ, և կամ էլ Մովսես Քերթողը՝ Մովսես Խորենացին, նրանց գործերը գրվել են մինչև 720-ական թթ.:

Այս երեք հեղինակներից Դավիթ փիլիսոփան թեև գրեթե բառացի հետևում է Թրակացուն, սակայն ձայնավորներ-բաղաձայններ հարաբերակցության մասին կատարում է հետևյալ էական տարբերակումը. «...զգայութիւնք՝ ձայնաւորաց և այլ անդամք մարմնոյն բաղաձայնից»[30]: Այսպիսով, ձայնավորները հարաբերվում են զգայարանների հետ, որոնց առավել աննյութեղենություն էր վերագրվում, քան մարմնի մյուս անդամներին, որոնց հետ հարաբերվում են բաղաձայնները: Դավիթ քերականը արտաբերման տեսանկյունից ևս ձայնավորները բաղաձայններից գերադաս է համարում՝ գրելով. «...որոշելով զձայնաւորսն ի բաղաձայնիցն, իբր պատուականս եւ պատճառս ձայնի յարմարման»[31]:

Դավիթ փիլիսոփան գրեթե բառացի հետևում է Թրակացուն՝ առանց որևէ բնագիտական ու հոգևոր-այլաբանական բացատրություն ավելացնելով հույն քերականի ասածին:

Հաջորդը Անանունի մեկնությունն է: Անանունը թեև քերականության բացատրությունը ներկայացնում է ըստ Թրակացու շարադրանքի ընթացքի, սակայն նրա մոտ նկատելի է այդ բացատրությունները բնագիտական զուգահեռի մեջ դիտելու և վերջիններս էլ հոգևոր

---

[28] Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, стр. 5:

[29] Նույն տեղում:

[30] Նույն տեղում, էջ 94, տե՛ս նաև Մատենագիրք Հայոց, հտ Ե, գիրք Ա, էջ 1174:

[31] Նույն տեղում:

վերաիմաստավորման ենթարկելու միտումը:

Այսպես, տառ-տարր բառային զուգահեռը հենց առանձին բացատրությամբ է ներկայացվում այս մեկնությունում: Համաձայն այս բացատրության, «որպէս տարերք նիւթ են ամենայն մարմնոյ, այսպէս գիր տարր է եւ նիւթ ամենայն խաւսից» (ինչպես որ տարրերի միջոցով են կազմվում բոլոր մարմինները, այնպես էլ գրերը, այսինքն՝ հնչյունները և տարրերը նյութն են բոլոր խոսքերի): Անանունը առավել է շեշտում ձայնավորների գերազանցությունը բաղաձայնների հանդեպ, թեև այս գերազանցությունը պայմանավորում է միայն արտաբերական հատկանիշով՝ առանց որևէ հոգևոր խորհուրդ հաղորդելու. «Եւ նախադասէ զձայնաւորսն իբրեւ զպատուականն եւ զպատճառս ձայնի յարմարման. քանզի ընդ ինքեանց եւս խառնելով զբաղաձայնսն բաւական հնչումն եւ յաւդաւոր ձայն բացակատարեն»[32]:

Մովսես Քերթողը ևս գրերը ենթարկում է հնչարտաբերական քննության և այս տեսանկյունից պայմանավորում ձայնավորների գերազանցությունը բաղաձայնների հանդեպ[33]:

Ստեփանոս Սյունեցին առաջին մեկնիչն է, որ հնչյուն-գիր հարաբերակցությունը ներկայացնում է հոգի-մարմին հարաբերակցությամբ՝ ասելով, թե գրի միջոցով «մարմին զգեցուցանեցին» (մարմին հագցրեցին) խոսքին, որպեսզի դյուրավ հասկացվի այն, ինչը որ չէր ընմբռնվում, քանի որ նյութեղեն չէր[34]: Ըստ Սյունեցու, շնորհիվ գրի «ածեալ զանմարմինն ի մարմին, զգեցուցանեն նմա մարմին զգիր»[35] (Դնելով անմարմինը մարմնի մեջ, որպես մարմին նրան գիրն են զգեցուցանում՝ հագցնում):

Նույն ձևով, մեկ քայլ առաջ անցնելով իր նախորդներից, Սյունեցին առավել շեշտված ձևով է տառը՝ հնչյունը տարր անվանում, քանի որ հնչյունները «ունին խառնումն եւ միաւորութիւն ընդ միմեանս առ ի լինումն գրոյ»[36] (իրար հետ ունեն խառնում և միավորություն գիր կազմելու համար):

Ձայնավորները նա անվանում է «հոգի կենդանական ի մարմնի»[37] (կենդանի հոգի մարմնում): Սա առաջին ակնարկությունն է ձանավորների, որպես հոգի, և բաղաձայնների, որպես թանձր մարմին լինելու, թեև այս հարաբերակցությունը դեռևս հոգևոր այլաբանության միջնադարյան ընդունված ըմբռնմամբ չի ներկայացվում:

Հաջորդ՝ Գրիգոր Մագիստրոսի մեկնությունը իր մյուս աշխատությունների նման յուրօրինակ վերադարձ է դեպ անտիկ ավանդները: Նա անգամ Թրակացուց ավելի մանրամասն է գրում Հոմերոսի մասին[38], և նրա մեկնությունը կարելի է համարել Թրակացու քերականության անտիկ շերտի բացատրությունը: Հատկանշական է, որ եթե նախորդ մեկնիչները Ո էին գրում ω փոխարեն, ապա Մագիստրոսը վերականգնում է նաև ω-ն:

---

[32] Նույն տեղում, էջ 131, Մատենագիրք, 1221:

[33] Նույն տեղում, էջ 162, Մատենագիրք, ջ 1197:

[34] Նույն տեղում, էջ 183:

[35] Նույն տեղում, էջ 184:

[36] Նույն տեղում, էջ 199:

[37] Տե՛ս նույն տեղում:

[38] Տե՛ս նույն տեղում, էջ 226:

Նա առանձնակի մանրամասնությամբ է ներկայացնում Է հնչյունը, որը ավելի շատ պայմանավորված է ոչ թե վերջինիս հնչյունական հատկանիշներով, այլ որ այն, լինելով յոթի թվային համարժեքը, ընդունված անտիկ ավանդույթով անվանվում է կույս: Այսպիսով, առաջինը Մագիստրոսի մոտ ենք գտնում գրերը թվերի հետ հարաբերելու և վերջիններիս պարունակած այլաբանական խորհրդի հետ հարաբերելու միջնադարյան տարածված սկզբունքը: Անհրաժեշտ է սակայն նշել, որ Մագիստրոսի մոտ յոթի, որպես աստվածային և կույս թվի ըմբռնումը ոչ թե նշանակում է միջնադարյան քրիստոնեական մտածողության արտացոլումը քերականագիտության այս բաժնում, այլ այն շարունակությունն է Պյութագորականներից եկող անտիկ ավանդների, որոնց դեռ կանդրադառնանք: Ահա այս պատճառով նա յոթին վերաբերվող օրինակները բերում է անտիկ դիցաբանությունից՝ այն կապելով Արամազդի հետ և ոչ թե զուգահեռի մեջ է դիտում յոթի պարունակած քրիստոնեական խորհուրդների հետ[39]:

(Շարունակելի)

[39] Նույն տեղում, էջ 235-236: Տե՛ս նաև Լ. Գ. Խաչերեան, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, Կեանքն ու գործունէութիւնը, Լոս Անճելըս, 1987, էջ 386-398: